

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
«ՀՀ ՊՆ ՆՏԱՂ-ԳՀԱՊՁԲ-20-10/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

05.12.2019թ.

Ժամը 11⁰⁰

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ԿԵ և ՁԲ վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ԿԵ և ՁԲՎ ՁԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,

ՀՀ ՊՆ ԿԵ և ՁԲՎ ՁԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ա. Սաֆարյանը,

ՀՀ ՊՆ ԿԵ և ՁԲՎ ՁԲՖԾ առաջատար մասնագետ Ռ. Չաթոյանը:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Թազայանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱՂ-ԳՀԱՊՁԲ-20-10/9» ծածկագրով գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը
հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարցման մասին տեղեկատվությունը քննարկելու, առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) պայմաններին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման (ԳՀ) ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Լ. Թազայան)

1.1 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն 1-ին տեղ զբաղեցրած թուր մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայրը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով գնահատող հանձնաժողովի կողմից չի գնահատվել, բացառությամբ Ա/2 Տիգրան Սիրադեղյանի և «Երվադա» ՍՊԸ-ի. մասնավորապես ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 25.11.2019թ.-ին տրամադրված եզրակացության հիմա վրա «Երվադա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեւ ժամկետանց պարտավորություններ (400,483 չորս հարյուր հազար չորս հարյուր ութսուներեք ՀՀ դրամ), իսկ Ա/2 Տիգրան Սիրադեղյանը (1,178,899 մեկ միլիոն մեկ հարյուր յոթանասունույթ հազար ութ հարյուր ինսունինը ՀՀ դրամ):

1.2 27.11.2019թ. կայացրած նիստում մասնակիցների կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱՂ-ԳՀԱՊՁԲ-20-10/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերին (տեխնիկական բնութագրերին) վերաբերող փաստաթղթերն ներկայացվել են սահմանված ժամկետում (առկա են) և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Շահարտ» և «Օստինատո» ՍՊԸ-ների ներկայացված որակավորման փաստաթղթերի:

«Շահարտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 3.1) չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին մասնավորապես.

35-րդ չափաբաժին՝ ջրատար խողովակաշարեր (Պոլիէթիլենային խողովակ Փ-20) ապրանքատեսակի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ խմելու ջրի համար, առաջնային հումքից ԴՕՇՏ-32415-2013:

36-րդ չափաբաժին՝ ջրատար խողովակաշարեր (Պոլիէթիլենային խողովակ Փ-25) ապրանքատեսակի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ խմելու ջրի համար, առաջնային հումքից ԴՕՇՏ-32415-2013:

38-րդ չափաբաժին՝ ջրատար խողովակաշարեր (Պոլիէթիլենային խողովակ Փ-40) ապրանքատեսակի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ խմելու ջրի համար, առաջնային հումքից ԴՕՇՏ-32415-2013:

39-րդ չափաբաժին՝ ջրատար խողովակաշարեր (Պոլիէթիլենային խողովակ Փ-50) ապրանքատեսակի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ խմելու ջրի համար, առաջնային հումքից ԴՕՇՏ-32415-2013:

40-րդ չափաբաժին՝ ջրատար խողովակաշարեր (Պոլիէթիլենային խողովակ Փ-63) ապրանքատեսակի մասով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում էր ընթացակարգի հրավերով պահանջվող հետևյալ պարբերությունը՝ խմելու ջրի համար, առաջնային հումքից ԴՕՇՏ-32415-2013:

«Օստինատո» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱՂ-ԳՀԱՊՁԲ-20-10/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ներկայացված 49-րդ չափաբաժին՝ (Երկաթյա անկյունակ (Մետաղական անկյունակ 30*30*3)) մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված 3.1)-ում նշված է «Հավասարակողմ 30x30մմ, պատերի 3 մմ, երկարությունը 6մ», սակայն հրավերի նույն չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում պահանջվում է հետևյալը՝ «Հավասարակողմ 30x30մմ, պատերի հաստությունը ոչ պակաս 3 մմ, երկարությունը 6մ»:

Ելելով վերոգրյալից՝ 28.11.2019թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի պահանջները՝ երեք աշխատանքային օրով կանցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով դրա մասին տեղեկացրեց *Ա/Ձ Տիգրան Սիրադեղյանին*, «Երվադա», «Շահարտ» և «Օստինատո» ՍՊԸ - ներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

05.12.2019թ. գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «Երվադա» ՍՊԸ-ի կողմից օրենքով սահմանված ժամկետում՝ ներկայացվեց ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկանք, առ այն, որ 15-ը նոյեմբերի 2019թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, իսկ *Ա/Ձ Տիգրան Սիրադեղյանի* կողմից ներկայացվեց նշված գումարի վճարումը հիմնավորող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) օրինակը:

«Շահարտ» և «Օստինատո» ՍՊԸ-ների կողմից սահմանված ժամկետում շտկվեցին ծանուցմամբ արձանագրված անհամապատասխանությունները: Ելնելով վերոգրյալից, գնահատող հանձնաժողովը որոշեց «Շահարտ» և «Օստինատո» ՍՊԸ-ների կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված N 3.1) տեխնիկական բնութագրերը և *Ա/Ձ Տիգրան Սիրադեղյանի*, «Երվադա» ՍՊԸ-ի հարկային պարտավորություններին վերաբերող փաստաթղթերը գնահատել բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

1.3 Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակիցների տվյալները գնահատեց սույն ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար (համապատասխան) և որոշեց վերջիններին հայտարարել ընտրված մասնակիցներ որտեղ վերջիններս ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-10/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան Բազրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման ղեկարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:



Գնահատող (ԳԱՊ)

Գնահատող

Գնահատող

Գնահատող

Գնումները համակարգող

 Ա. Մուրադյան
 Ա. Դազարյան
 Ա. Սահարյան
 Ռ. Չախոյան
 Լ. Թազայան